

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ

գիտխորհրդում

արձանագր. թիվ \_4\_ “\_08\_ “\_05\_ 2009թ.

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎՊՄԻ-ՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգի նպատակն է որոշելու ՎՊՄԻ-ում Լոռվա տարածաշրջանի դպրոցականների օլիմպիադայի կազմակերպչական-մեթոդական ապահիվան, անցկացման և ֆինանսավորման կարգը, դպրոցականների մասնակցությունը և հաղթողներին ու մրցանակակիրներին որոշելու կարգը:

1.2. Սույն կանոնակարգը մշակված է՝

- ՀՀ “Կրթության մասին” օրենքի,
- “ՀՀ դպրոցականների օլիմպիադաների անցկացման մասին” ՀՀ ԿԳՆ հրամանի,
- ՎՊՄԻ-ի գիտխորհրդի որոշման հիման վրա:

1.3. Օլիմպիադայի անցկացման հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- աշակերտների ստեղծագործական ընդունակությունների, գիտահետազոտական գործունեության նկատմամբ հետաքրքրության բացահայտումը և զարգացումը, մասնագիտության ճիշտ ընտրությանը նպաստելը,
- օժտված երեխաներին սատարելու անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

### 2. Օլիմպիադայի կազմակերպման ընթացքը

2.1. ՎՊՄԻ-ում կազմակերպվող օլիմպիադայում կամավորության սկզբունքով կարող են մասնակցել Լոռվա տարածաշրջանի պետական և ոչ պետական հանրակրթական դպրոցների և վարժարանների բարձր դասարանների սովորողները:

2.2. ՎՊՄԻ-ի օլիմպիադան անցկացվում է յուրաքանչյուր տարվա մարտ-ապրիլ ամիսներին: Օլիմպիադայի անցկացման ստույգ ժամկետը որոշվում է ՎՊՄԻ-ի գիտխորհրդի կողմից:

2.3. Օլիմպիադան անցկացվում է հանրակրթական առարկաներից, որոնց ցանկը որոշում է գիտխորհուրդը՝ ՀՀ ԿԳՆ կողմից սահմանված առարկաների ցանկի հիման վրա:

2.4. Օլիմպիադայի կազմակերպման նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվում է կազմկոմիտե:

2.5. Օլիմպիադայի հաղթողներին և մրցանակակիրներին /նաև խրախուսական/ որոշելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվում է մրցութային հանձնաժողով, որի գործունեությունը իրականացվում է համաձայն սույն Կանոնակարգի:

2.6. Օլիմպիադայի մեթոդական ապահովման և առաջադրանքների գնահատման նպատակով կազմակերպվում են առարկայական հանձնաժողովներ, որոնց կազմը ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհրդներում առաջադրում են ամբիոնների վարիչները և ներկայացվում է ռեկտորի հաստատմանը: Առարկայական հանձնաժողովի գործունեությունը իրականացվում է համաձայն սույն Կանոնակարգի:

2.7. Օլիմպիադայի անցկացման մեթոդական ապահովումը.

2.7.1. ՎՊՄԻ-ի օլիմպիադան անցկացվում է հանրակրթական ծրագրերի հիման վրա մշակված առաջադրանքներով:

2.7.2. Առարկայական առաջադրանքները /տարբերակներ, թեստային աշխատանքներ/ և գնահատման չափանիշները օլիմպիադային անցկացումից առնվազն 1 շաբաթ առաջ առարկայական հանձնաժողովների նախագահները ներկայացնում են ռեկտորին :

2.7.3. Գնահատումը կատարվում է 10-միավորանոց սանդղակով՝ պահպանելով տասնորդական միավորներով գնահատելու կարգը:

2.7.4. Առաջադրանքների կատարման համար սահմանված ժամանակը՝ 2,5 ժամ:

2.8. Օլիմպիադայի հաղթողներ են ճանաչվում այն մասնակիցները, որոնք հավաքել են ամենաբարձր միավորները՝

1-ին տեղ՝ 9.1-10 միավոր,

2-րդ տեղ՝ 8,1-9 միավոր,

3-րդ տեղ՝ 7-8 միավոր:

2.9. 7 միավորից ցածր միավորներ հավաքած մասնակիցները չեն կարող հավակնել ճանաչվելու օլիմպիադայի հաղթող:

2.10. Արդյունքները հրապարակվում են բուհի կայքում օլիմպիադային հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում:

2.11. Արդյունքների ամփոփումից հետո օլիմպիադայի հաղթողներին հանձնվում են մրցանակներ, մասնակիցներին՝ շնորհակալագրեր:

### **3. Օլիմպիադայի ֆինանսական ապահովումը**

3.1. Օլիմպիադայի անցկացումը ֆինանսավորվում է ՎՊՄԻ-ի բյուջեից: Տրամադրվող միջոցները նախատեսվում են.

- հաղթողների պարգևատրման,
- անհրաժեշտ նյութերի ձեռքբերման,
- մասնակիցների սննդի ապահովման,
- ոչ վանաձորաբնակ մասնակիցների ճանապարհածախսի համար: